ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

2020-2021

I-II կիսամյակ

ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

ՈՍԿԵՐԻՉ

ԽՈՀԱՐԱՐ

ՕՊԵՐԱՏՈՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ

ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՓՈՐԱԳՐՈՂ

ՌԱԴԻՈՄԵԽԱՆԻԿ

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գիտելիքի, գրի եվ դպրության օր 3
Անկախություն 28-ամյակ 4
Հովհաննես Թումանյան – 150 7
Սրբոց թարգմանչաց տոն 10
Դիպուկահար հրաձիգ-2019 13
Լինենք առողջ մարմնով և հոգով 14
Սպորտային հաջողություններ 17
Ֆուտբոլի մրցաշար 18
Մասնագիտական հմտություններ 20
Այցելություն Վեոլիա ջրի Գյումրու մասնաճյուղ 23
Սպորտային հաջողություններ 26
Այցելություն ԼՅՈՒՔՍ վարսավիրանոց 27
Այցելություն Գյումրու ամերիկյան անկյուն 30
Սպորտային հաջողություններ 33
Ուսուցողական այց "Sirius plus" ուսումնական կենտրոն 34
Ի՞նչ, Որտե՞ղ, Ե՞րբ ինտելեկտուալ խաղ 37
Սպորտային հաջողություններ 40
Մասնակցություն Երեխաների համաշխարհային օրվա 30-ամյակին նվիրված գագաթնաժողովին 41
Այցելություն ՀՀ ՊՆ 55035 զորամաս 42
Ուսանողների միջազգային օր 43
Սպորտային հաջողություններ 45
Սիրո և պանդխտության հայրենների երգիչը՝ Նահապետ Քուչակ 46
Սեմինար-դասընթաց՝ Տարհանման կազմակերպումը երկրաշարժի դեպքում 49
Ուսանողական հաջողություններ 50
Հիշատակի տուրք 51
Մասնագիտական հնարքներ 52
Բարոյագիտության ոսկե կանոնը 55
Կտրվածքների առանձնահատկություններն ու գույների ներդաշնակությունը 58
Սպորտային հաջողություններ 61
Ամանորյա դիմակահանդես 62
Տաք ձմեռ բարեգործական ծրագիր 63
Կրթության դերը անձի ձևավորման և զարգացման գործընթացում 64
Բաց դաս՝ Թմրամոլությունը որպես հասարակության չարիք 67
Խաղաղության արծիվներ 70
Համատեղ վիկտորինա մաթեմատիկա, կենսաբանություն և քիմիա առարկաներից 73
Մաթեմատիկան ամենուրեք 76
Գոռ Խաչատրյանը՝ հրաձգության Եվրոպայի ոսկե մեդալակիր 79
Սեղանի թենիսի մրցաշար՝ նվիրված Հայոց բանակի 28-ամյա տարելից 81
Առցանց ուսուցում 84
Ծախմատի առցանց ուսուցում 85
Ուսումնական տարվա ամփոփում 87
Դասընթաց՝ Անձի ինքնագնահատում և SWOT (ՈՒԹՀՌ) վերլուծություն 90
Սեղանի թենիսի մրցաշար՝ նվիրված Հայոց բանակի 28-ամյա տարելից 91
Հայաստանում բոլորի համար ներառական, համապատասխան և որակյալ կրթության խթանում 92
Բարեխղճության ազգային համակարգը սեմինար-դասընթաց 93

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում սեպտեմբերի 14-ին տեղի ունեցավ «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում-համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ ՄԿՈՒ ուսանողների միջև իրականացված «Միջին մասնագիտական կրթության կարևորության իմ տեսակետը» խորագրով մուլտիպլիկացիոն/անիմացիոն ֆիլմերի մրցույթի մրցանակների հանձնման արարողությունը:

Մրցանակաբաշխությանը ներկա էին նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյանը, «Ֆերտի» բարեգործական կենտրոն» Հասարակական Կազմակերպության նախագահ՝ Խաչիկ Սահակյանը, «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի նախագահ, Գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում-համագործակցություն Հարավային Կովկասում» ծրագրի ղեկավար Մարինե Ժամկոչյանը և տարբեր հաստատություններից ներկայացուցիչներ:

Միջոցառմանը հեռավար հետևում էր նաև Գերմանական «Մասնագիտական կրթություն և ուսուցում համագործակցություն» ծրագրի ղեկավար Ուտե Ֆոկը, ով ողջույնի խոսք հղեց ներկաներին և վստահեցրեց, որ ուսումնարանում գործող Ուսանողական կազմակերպություններ ծրագիրը շարունակվում է, և ուսանողները լուրջ հաջողությունների կհասնեն իրենց բիզնես ծրագրերում:

Նշենք, որ ՄԿՈՒ խթանմանն ուղղված մուլտֆիլմերի մրցույթը հայտարարվել էր 2019 թվականի ապրիլ ամսին, որի կազմակերպման նպատակն է տաղանդավոր աշակերտների, ուսանողների և երիտասարդների միջոցով խրախուսել և կարևորել միջին մասնագիտական կրթությունը:

Մրցույթին մասնակցել են 14-24 տարեկան ուսանողներ, ովքեր ստեղծարար (կրեատիվ) են և կարող են մուլտիպլիկացիոն/ անիմացիոն ֆիլմերի և գրաֆիկաների միջոցով ընդգծել ՄԿՈՒ կարևորությունը: Մասնակիցները 14 ուսումնական հաստատություններից էին՝ անհատներ և խմբեր, ընդհանուր 43 ուսանողներ:

Մրցանակներն ու խրախուսանքները 14 լավագույն ուսանողներին հանձնեցին պարոն Աղբալյանը և տիկին Ժամկոչյանը, վերջինս նշեց, որ հաճելիորեն զարմացած է ստացած արդյունքներից, ինչը ոգևորում ու լրացուցիչ խթան է հանդիսանում ծրագրի շարունակականության ապահովման համար:

Միջոցառման շրջանակում տեղի ունեցավ նաև ծանոթացում ուսումնարանում «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի, «Ֆերտի» բարեգործական կենտրոն հասարակական կազմակերպության և Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի համագործակցությամբ «Վերականգնվող էներգիայի աղբյուրների և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների» կենտրոն լաբորատորիայի ստեղծման առաջին փուլի՝ ուսումնարանում գրուցարան տաղավարի կառուցման աշխատանքների հետ:

Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյանը շնորհակալություն հայտնեց համագործակցող բոլոր կողմերին և նշեց, որ ապագային միտված նմանատիպ ծրագրերի պտուղները երկար սպասեցնել չեն տա:

Նկարադարան

Լուսաբանում

2020թ սեպտեմբերի 6-14-ը ՀՀ ԿԳՄՍՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի չորս ուսանողներ՝ Գոհար Սարիբեկյանը, Արմեն Հասանյանը, Անուշ Սիմոնյանը, Սյուզաննա Գևորգյանը խմբի ղեկավար՝ ուսումնարանի դասախոս Ռոստամ Պետրոսյանի ուղեկցությամբ Աղվերանում մասնակցեցին «Հույս և օգնություն» ՀԿ-ի նախաձեռնած «Հզորացնել Հայաստանում աշխատանքային իրավունքների պաշտպանությունն ուսուցման միջոցով» խորագրով ամառային դպրոցին:

Դասընթացների շրջանակում ուսանողներն ունեցան հագեցած առօրյա մասնակցեցին արշավների, ճանաչողական հանդիպումներ ունեցան ԱԺ պատգամավոր Սոֆյա Հովսեփյանի, հոգեբան Անի Ենգիբարյանի, ՀՕՖ տնօրենի տեղակալ Մարգարիտա Փիլիպոսյանի, ՄԻՊ գրասենյակի ներկայացուցիչ Մարինե Ավագյանի, ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչ Անդրանիկ Մանուկյանի և այլ մասնագետների հետ:

Ուսանողները հարստացան աշխատանքային իրավունքի վերաբերյալ գիտելիքներով, ակտիվ մասնակցեցին ճամբարի բոլոր միջոցառումներին, իրենց հուզող հարցերով կիսվեցին դասընթացների մասնագետների հետ, առաջարկեցին համապատասխան լուծումներ:

Ուսանողական խումբը և ղեկավար Ռոստամ Պետրոսյանն ակտիվ մասնակցության համար պարգևատրվեցին վկայականներով:

Աննման Մինասյան

Նկարադարան

ՎԿԱՅԱԿԱՆ

Տրված է _____ ին

Լուսաբանում

Սույն թվականի դեկտեմբերի 17-ին, Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում, անցկացվեց «Հերոսները չեն ծերանում» խորագրով միասնական տեղեկատվական դաս՝ նվիրված Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակին:

Դասի նպատակն էր խորացնել Հայրենական մեծ պատերազմի մասին սովորողների գիտելիքները, ինչպես նաև արժևորել ԽՍՀՄ ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի դերը ֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակում:

Հայոց պատմության դասախոս Ա. Պետրոսյանը հանգամանորեն ներկայացրեց Հայրենական մեծ պատերազմի պատճառները ու բնույթը, կարևորելով ֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակում ԽՍՀՄ ժողովուրդների դերը: Սահուն ձևով անցում կատարվեց «հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին և ներդրած ավանդը հաղթանակի կերտման գործում» թեմային, որը մանրակրկիտ ներկայացվեց հայոց պատմության և հասարակագիտության դասախոս Ա. Աղաբաբյանը: Տեղեկատվական դասը առավել պատկերավոր դարձնելու նպատակով զուգահեռ ցուցադրվեցին տեսանյութեր՝ պատերազմին մասնակցած հայ զորահրամանատարների, հայկական դիվիզիաների կազմավորման մասին:

Տեսանյութը դիտելուց հետո դասախոսները պատասխանեցին ուսանողներին հետաքրքրող հարցերին՝ առանցքում պահելով համամարդկային պատմության մեջ ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի դերը:

Ամփոփման փուլում ուսանողները գնահատեցին և արժևորեցին Հայրենական մեծ պատերազմի հաղթանակը, որը նպաստեց ազգերի միավորմանն ու բարեկամությանը՝ խթանելով երկրի բարգավաճումը:

Հումանիտար մեթոդիստորում

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Համակարգիչների շահագործում» մասնագիտությամբ երկրորդ կուրսի ուսանող Եվրոպայի չեմպիոն Գոռ Խաչատրյանը մասնակցել է Երևանում դեկտեմբերի 15-18-ը կայացած ՀՀ երիտասարդների գնդակային հրաձգության առաջնությանը: Նա, վազող թիրախ, նորմալ վազք, 10 մ, 0+30 վարժությունում խոցելով 572 միավոր, կրկնել է ՀՀ ռեկորդը, իսկ մրցման երկրորդ օրը խառը վազք, 10 մ, 20+20 վարժությունում խոցելով 385 միավոր՝ 1 միավորով գերազանցել ՀՀ ռեկորդը: ՀՀՖ գլխավոր մարզիչ Մեյրան Նիկողոսյանի գլխավորությամբ խորհրդի նիստն առաջնության ուժեղագույն մարզիկ է ընտրել Գոռ Խաչատրյանին, և արժանացրել դրամական պարգևի, մեդալի և պատվոգրի:

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Սեղանի թենիսի մրցաշար

Վայրը՝ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճ

Նպատակը .

- խթանել ուսանողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը,
- կազմավորել ուսումնարանի հավաքական թիմ,
- խթանել հետաքրքրություն սեղանի թենիսի նկատմամբ,
- զարգացնել վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
- կարողանալ տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնել, հաղորդակցվել, համագործակցել,
- ունենալ բավարար ֆիզիկական պատրաստվածություն,
- դրսևորել տեխնիկական և տակտիկական գործողությունների ստեղծագործական կիրառում:

Նախապատրաստական աշխատանքներ.

- սեղանի թենիսի պարապմունքների անցկացում,
- մրցույթի մասնակիցների հավաքագրում,
- մրցակարգի մշակում /օլիմպիական մրցակարգ/,
- վիճակահանության անցկացում,
- պատվոգրերի պատրաստում:

Ընթացքը.

- մրցույթի մասնակիցների ներկայացում,
- օլիմպիական կանոնակարգի ներկայացում՝ համաձայն սեղանի թենիսի կանոնակարգի,
- I, II, III մրցանակային տեղերի գնահատում մրցավարի կողմից,
- համապատասխան պատվոգրերի հանձնում:

Անհրաժեշտ մարզագույք

- սեղանի թենիսի գնդաթի,
- սեղանի թենիսի գնդակներ,
- թենիսի սեղան,
- սուլիչ,
- A4 ձևաչափի թուղթ /պատվոգրերի համար/:

Ֆիզդեկ՝ Ն. Սուքիասյան

Լուսաբանում

Հաշվի առնելով, որ դեկտեմբերի 1-ը նշվում է որպես ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի միջազգային օր, 03.12.2020թ. Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի կենսաբանության դասախոս Զ. Նահապետյանը առաջին կուրսերի ուսանողների համար անցկացրեց «ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը և դրա կանխարգելումը» թեմայով տեղեկատվական դաս: Դասի նպատակն էր ուսանողներին ծանոթացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի փոխանցման ուղիներին և տարածման պատճառներին, արժևորել կանխարգելման գործընթացը և խուսափել հիվանդությունից:

Զ. Նահապետյանը, կարևորելով տեղեկացված լինելու անհրաժեշտությունը, նշեց որ մեզանից յուրաքանչյուրն ինքն է կերտում իր ճակատագիրը՝ մեջբերելով Հիպոկրատի խոսքերը. «Ավելի հեշտ է հիվանդությունը կանխարգելել, քան բուժել»:

Թեմային համապատասխան սահիկաշարի միջոցով ներկայացվեց ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծագման և զարգացման պատմությունը, ՄԻԱՎ-ի նկատմամբ բնակչության խոցելի խմբերը, ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները: Նշվեց, որ ՄԻԱՎ վարակը չի ճանաչում տարիք, սեռ, սոցիալական վիճակ և ըստ ՀԱԿ պաշտոնական տվյալների ամեն րոպե Երկիր մոլորակի վրա ՄԻԱՎ-ով վարակվում է 19 մարդ, իսկ ՁԻԱՀ-ից մահանում՝ 11 մարդ:

Վերջում «Վարակի ուղիները» քարտի միջոցով ստուգվեց մասնակիցների ձեռք բերած գիտելիքները ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների վերաբերյալ:

Ուսանողների վերջնական տեսակետն այն էր, որ ՄԻԱՎ-ով վարակումից խուսափելու համար ցանկացած իրավիճակում անհրաժեշտ է դրսևորել պատասխանատու վերաբերմունք ինչպես սեփական անձի, այնպես էլ շրջապատի նկատմամբ՝ գնահատելով տեղեկացված լինելն ու առողջ ապրելակերպի սկզբունքներին հավատարիմ մնալը:

Դասն անցկացվեց հակահամաճարակային բոլոր կանոնների պահպանմամբ:

Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորում

Նկարադարան

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի երրորդ կուրսի ուսանող Հոր Ղազարյանը 13-31 տարիքային խմբում արժանացել է 1-ին պատվավոր մրցանակային տեղին՝ Հայաստանի Հանրապետությունում Ատոմային ճյուղի հիմնադրման 75-ամյակին նվիրված «Տեխնոլոգիաներ, որ փոխում են աշխարհը» հանրապետական նկարչական մրցույթում:

Նշենք, որ մրցույթի առաջին փուլի բազմաթիվ աշխատանքներից մասնագիտական ժյուրին ընտրել էր 20 լավագույնները, որոնցից էլ ընտրվել է լավագույնը:

Մրցույթը կազմակերպվել էր Ռոսատոմ պետական կորպորացիայի և Հայկական ԱԷԿ-ի կողմից՝ համագործակցելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների, ինչպես նաև Երևանում ու Գյումրիում գործող գիտության և մշակույթի ռուսաստանյան կենտրոնների հետ:

Շնորհավորում ենք Հորին, մաղթում նորանոր հաջողություններ:

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի ուսանողները հունվարի 28-ին՝ Հայոց բանակի 29-ամյակի կապակցությամբ Շիրակ գերեզմանատան «Ազատամարտիկների պանթեոն»-ում ուսումնարանի զինղեկ Արթուր Վարդանյանի և դասախոս Անանա Մարգարյանի ուղեկցությամբ իրենց խոնարհումն ու ակնածանքը բերեցին մարտիրոսված մարտիկների շիրիմների առաջ:

Նրանք աղոթքի ճիչով, լռության խոկումով հանդիպեցին իրենց ընկերների շիրիմներին, ուսումնարանի շրջանավարտներ՝ Արթուր Աթոյան, Կարեն Սարգսյան, Հարություն Ղազարյան: Ծանրության, սակայն հպարտության անբացատրելի շունչն էր, որ հանդիպման առաջին պահին զգացին ուսանողներն ու մանկավարժները: Շատ հարցեր ունեին տալու իրենց ուսանողական ընկերներին, կարոտի, ապրելու, սիրելու բառեր էին որոնում նրանք, որոնք աղոթքի ու խնկարկման հետ բարձրացան երկինք՝ խոստանալով, որ սխրանքի ու ակնածանքի հերոսական այս օրինակը կդառնա փյունիկ՝ սերնդակիցների ու ընկերների համար, իսկ տղաների չիրականացած երազանքներն ու նպատակները կիրագործվեն կրտսեր ընկերների կողմից:

Ուսանողները ծաղիկներ խոնարհեցին մեր հերոսների շիրիմներին և տուն դարձան իրենց ուխտը վերանորոգած՝ հավերժ փառաբանելով անմահ հերոսներին՝ անուն առ անուն, դառնալ ավելի ուժեղ, համախմբված, ամուր ու անպարտելի....

Մ. Էլբակյան

Ծրագիր

<Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան> ՊՈԱԿ

Առողջ ապրելակերպ դասընթացի շրջանակներում «Ո՛չ թմրամոլությանը» խորագրով պատի թերթի և «Թմրամոլության բացասական հետևանքները» խորագրով սահիկաշարի պատրաստում՝ ելնելով թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին

Մասնակիցներ՝ առաջին և երկրորդ կուրսերի ուսանողներ

Դասի նպատակը.

- Ձևավորել բացասական վերաբերմունք թմրամոլության և թմրանյութերի ապօրինի շրջանառության նկատմամբ:
- Կարևորել առողջության պահպանումը:
- Գնահատել տեղեկացված լինելու կարևորությունը:
- Հավատարիմ մնալ առողջ ապրելակերպի սկզբունքներին:
- Կազմակերպել ուսանողների նպատակային ժամանցը:

Նախապատրաստական փուլ.

Առաջին և երկրորդ կուրսերի ուսանողներին հանձնարարել հավաքել տեղեկատվություն թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ, պատրաստել պատի թերթ և սահիկաշար:

Ընթացքը.

- ✓ Պատի թերթի և սահիկաշարի միջոցով ներկայացնել տեղեկատվությունը
- ✓ Կատարել վերլուծություններ

Անհրաժեշտ պարագաներ՝ թուղթ, գունավոր մարկերներ, ներներ, էլեկտրոնային նյութ, էլեկտրոնային գրատախտակ:

Ակնկալվող արդյունք.

Թմրանյութերի և թմրամոլության նկատմամբ բացասական վերաբերմունք դրսևորող ուսանողներ:

Պատասխանատու՝ Ն. Սուքիասյան

Լուսաբանում

Փետրվարի 2-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճում «Առողջ ապրելակերպ» դասընթացի շրջանակում առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների մասնակցությամբ անցկացվեց դաս-միջոցառում՝ նվիրված թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարին:

Միջոցառման նպատակն էր ձևավորել բացասական վերաբերմունք թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության նկատմամբ, կարևորել առողջության պահպանումը և հավատարիմ մնալ առողջ ապրելակերպի սկզբունքներին:

«Ոսկերչություն՝ ոսկերիչ», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում՝ վարսահարդար» մասնագիտությունների առաջին կուրսերի ուսանողները պատրաստել էին «Ո՛չ թմրամոլությանը» խորագրով պատի թերթ, իսկ «Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի» մասնագիտությամբ երկրորդ կուրսի ուսանողները՝ «Թմրամոլության բացասական հետևանքները» խորագրով սահիկաշարեր:

Բոլոր մասնակիցներն իրենց պատրաստած դիդակտիկ նյութերի միջոցով վարժ ներկայացրին թմրանյութերի հիմնական տեսակները, դրանց ազդեցությունն օրգանիզմի վրա, թմրամիջոցների գործածման պատճառները, հասարակության խոցելի խմբերը, ինչպես նաև դրանց բացասական ազդեցությունն առողջական, սոցիալական, հոգեբանական, իրավական և ֆինանսական տեսանկյուններից:

Ներկայացված տեղեկատվությունը տպավորիչ և ազդեցիկ էր, մեջ բերված տեսանյութերը՝ ահազանգող:

Դասի ավարտին ներկաները կատարեցին վերլուծություններ՝ գալով վերջնական եզրահանգման, որ բոլորս միահամուռ ուժերով պետք է վերակառուցենք մեր երկիրը, զարգացնենք համայնքները, մեր կյանքը, ինքնությունը առանց թմրամիջոցների՝ ապրելով, սիրելով, արարելով:

Դասն անցավ հակահամաճարակային բոլոր կանոնների պահպանմամբ:

Պատասխանատու՝ Ն. Մուքիասյան

Նկարադարան



Լուսաբանում

22 ԿԳՄՄՆ Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Գեղանկարչություն և քանդակագործություն փորագրող փայտյա գեղարվեստական իերի» մասնագիտությամբ առաջին կուրսի ուսանող Համլետ Պարսամյանը մասնակցեց փետրվարի 5-7 Երևան քաղաքում կայացած Հայաստանի տղաների և աղջիկների 2021թ. Այուդոյի պատանիների առաջնությանը: Նա 66կգ. քաշային կարգում զբաղեցրեց 2-րդ մրցանակային տեղը:

Շնորհավորում ենք մեր պատանի Այուդոիստին և մաղթում նորանոր հաղթություններ:

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Եթե դուք ուզում եք լողալ սովորել, ապա համարձակ ջուրն եք մտնում: Իսկ եթե ուզում եք սովորել խնդիրներ լուծել, ապա սկսեք լուծել դրանք:

Դ. Պոյա

Վիկտորինա՝ <Մաթեմատիկան և մենք> խորագրով

Կազմակերպիչ՝ Ռ. Պետրոսյան

Նպատակը.

1. Զարգացնել հետաքրքրություն մաթեմատիկայի հանդեպ:
2. Գնահատել Սերգեյ Սերգեյանի թողած ժառանգությունը:
3. Նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը:
4. Զարգացնել ուսանողների թիմային աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակությունը:
5. Կազմակերպել ուսանողների նպատակային ժամանցը:

Նախապատրաստական փուլ

- Ընտրել մրցույթի հարցերը:
- Պատրաստել մասնակցության հայտը և ձևավորել ժյուրիի կազմը:
- Ձևավորել հավաքական թիմեր՝ համապատասխանաբար՝ առաջին, երկրորդ, երրորդ կուրսերից:
- Պատրաստել պատվոգիր:

Ընթացքը.

I մաս

Բացման խոսք, տեսանյութի դիտում նվիրված Սերգեյ Սերգեյանի գործունեությանը

II մաս

Հիմնական փուլ /խաղի անցկացում/

III մաս

Արդյունքների ամփոփում

Արդյունք.

Տրամաբանական մտածողությամբ զարգացած, մաթեմատիկական գիտելիքներով հարստացած ուսանողներ:

Բնագիտամաթեմատիկական մեթոդմիավորում

Լուսաբանում

Սույն թվականի փետրվարի 18-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի դահլիճում անցկացվեց վիկտորինա՝ «Մաթեմատիկան և մենք» խորագրով: Վիկտորինային մասնակցում էին առաջին, երկրորդ և երրորդ կուրսերի հինգ մասնակցից կազմված հավաքական թիմերը:

Մրցույթի նպատակն էր նպաստել ուսանողների ինքնուրույն մտածողության և ստեղծագործական մտքի զարգացմանը, արժեքորել նոր գիտելիքների ձեռքբերումը, զարգացնել ուսանողների թիմային աշխատելու և արագ կողմնորոշվելու ունակությունն ու կազմակերպել ուսանողների նպատակային ժամանցը:

Միջոցառումը սկսվեց մեկ րոպե լռությամբ՝ հարգելով Արցախյան պատերազմում զոհվածների հիշատակը:

Խաղասկզբին ներկայացվեց վիկտորինայի կանոնակարգը:

Միջոցառումը կազմված էր երկու փուլից: Առաջին փուլի համար նախատեսված էր 11 հարց, իսկ երկրորդ փուլի համար՝ 16 /մաթեմատիկական խաչբառի տեսքով/:

Խաղի ավարտին կատարվեց արդյունքների ամփոփում, որի արդյունքում հաղթող ճանաչվեց առաջին կուրսերի հավաքական թիմը:

Մրցույթում հաղթած թիմը պարգևատրվեց պատվոգրով:

Կազմակերպիչ՝ Ռ.Պետրոսյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

«Հունդը մեր գոյության» խորագրով ասմունքի ցերեկույթ՝ նվիրված մայրենի լեզվի միջազգային օրվան

Անցկացման ամսաթիվը՝ 22.02.2021թ.
Մասնակիցներ՝ Ուսանողական խորհուրդ

Միջոցառման նպատակը.

- Ներկայացնել վաղնջական ժամանակներից ի վեր հայոց լեզվի դերը հայի տեսակի կերտման, հայ ժողովրդի մտածողության ու հոգեբանության ձևավորման ամենազորեղ միջոց, ազգի գոյության վկայագիր:
- Արժևորել հայ ժողովրդի ինքնության արտահայտչի, ազգային հոգևոր հիմնասյան, միտքն ու հոգին սնող հարազատ լեզվի տոնը:
- Ուսանողներին հաղորդակից դարձնել Մեսրոպ Մաշտոցի ժառանգությանը՝ մեսրոպատառ ու ոսկեղենիկ հայերենին, որով արարվել են հայոց բազմադարյա հոգևոր արժեքները, մշակույթի և արվեստի մնայուն կոթողները:

Ընթացքը.

- Նախամուտք - Մեսրոպ Մաշտոցի՝ «Տէր, որ ի մեջ լերինն» շարական
- Բացման խոսք - /գրադարանավար՝ Ս. Հակոբյան/
- Ձոն-աղոթք հայոց այբուբենով
- Մեսրոպ Մաշտոցի կենսագրության մասին տեղեկությունների հաղորդում
- Քրիստոնեության մուտքը Հայաստան և Հայոց գրերի գյուտը
- Դպրոցը
- Թարգմանչական գրականությունը. «Աստվածաշնչի» թարգմանությունը
- Մայրենի լեզվին նվիրված ստեղծագործությունների ընթերցումներ
- Վերլուծություն և ամփոփում

Ակնկալվող արդյունքը.

- Հայ ժողովրդի ինքնության արտահայտչի, ազգային հոգևոր հիմնասյան, միտքն ու հոգին սնող հայոց ոսկեղենիկ լեզվի վերարժևորում:
- Ուսանողների հայեցի դաստիարակման գործում մշակութային ժառանգության ճանաչում և գնահատում, հոգևոր ու մտավոր զարգացում, արժեքային համակարգի ձևավորում:

Գրադարանավար՝ Ս. Հակոբյան

Լուսաբանում

Մեսրո՛պ, հայ դարերուն դիմաց կեցող
Դուն աղամանդյա ապառաժ....
Միամանթ

«Արարիչ բոլոր գոյությունների, Դատավոր երկնքի, Ջորավոր էության, Հավիտենական թագավոր....». Մաշտոցյան ոսկեդենիկ հայերենի Ձոն աղոթքով մեկնարկվեց Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում Մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված ասմունքի ցերեկույթը: Միջոցառման կազմկերպիչներն էին գրադարանավար Մեղա Հակոբյանը և Ուսանողական խորհուրդը:

Օրվա խորհուրդը հայ ժողովրդի ինքնության արտահայտչի, ազգային հոգևոր հիմնապան, միտքն ու հոգին սնող հարազատ լեզվի վերարժևորումն էր:

Ուսանողների խոսքը համեմված էր Տարօնական անդաստանում, Հացեկաց գյուղի ծոցում ծնված մաշտոցյան պատգամներով, մեծերի բանաստեղծական տողերով, հայոց այբուբենին կենարար զորությանը ներքոված խոսքերով, երաժշտական ընդմիջումներով:

Միջոցառման ավարտին մանկավարժները ևս մեկ անգամ պատգամեցին. «Պահե՛նք ու զորացնե՛նք մեր անգին հարստությունը՝ մայրենին, սիրե՛նք, սովորե՛նք, զարգացնե՛նք այն, դարերի ճամփորդ դարձած՝ այն մեզ է նվիրաբերվել և մենք պարտավոր ենք արժևորել, հոգալ դրա մաքրության և հարստության համար»:

Գրադարանավար՝ Ս. Հակոբյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Ծրագիր

«Վարդանը և վարդանանք» խորագրով բաց դասի

Առարկա՝ հայ գրականություն

Դասավանդող՝ Գ. Ավետիսյան

Թեման՝ «Վարդանը և վարդանանք»

Անցկացման ժամկետը՝ փետրվար 2021թ.

Նպատակ

- ներկայացնել Վարդանանց պատերազմի հիմքը և պատճառները
- ճանաչել և արժևորել 451թ. Ավարայրի ճակատամարտի հերոսների թողած ազդեցությունը հետագա սերունդների վրա
- Վարդանանց կերպարը գրականության մեջ և արվեստում

Դասի կահավորումը՝

համակարգիչ, պրոեկտոր, գրքեր

Նախապատրաստական փուլ՝

- հանձնարարել ուսանողներին ուսումնասիրել Եղիշեի, Դ. Դեմիրճյանի և այլոց ստեղծագործությունները, զուգահեռներ անցկացնել
- ստեղծել թեմատիկ սահիկաշար

Ընթացք.

- բացման խոսք
- հայրենասիրական երգերի ունկնդրում և բնագրային հատվածների ընթերցում
- ֆիլմի դիտում և Կարմիր Վարդանի հերոսական նահատակության ներկայացում

Ակնկալվող արդյունք.

- Վարդանանց թողած հայրենասիրական դասերը գնահատող և արժևորող ուսանողներ
- հայրենասիրական գաղափարով ոգեշնչված սերունդ

Հումանիտար մեթոդմիավորում

Լուսաբանում

«Վարդանը և Վարդանանք»

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում 2021 թվականի մարտի մեկին տեղի ունեցավ բաց դաս՝ «Վարդանը և Վարդանանք» խորագրով՝ նվիրված սրբոց Վարդանանց տոնին, որի պատասխանատուն էր հայոց լեզվի և գրականության դասախոս Գայանե Ավետիսյանը և «Օպերատոր համակարգիչների» մասնագիտությամբ երրորդ կուրսի ուսանողները:

Օրվա խորհուրդը հայ ժողովրդի ինքնության արտահայտումն էր, 451թ. Ավարայրի ճակատամարտի հերոսների թողած ազդեցությունը հետագա սերունդների վրա, ինչպես նաև Վարդանանց կերպարի ներկայացումը գրականության և արվեստի մեջ:

Ուսանողների խոսքը համեմված էր Եղիշեի հայրենաշունչ պատգամներով, Վարդանանց պատերազմին վերաբերող ընտրված բնագրային հատվածների ընթերցմամբ: Ուսանողները թեմատիկ սահիկաշարի միջոցով ներկայացրին Վարդանանց կերպարը արվեստում՝ արժևորելով հայ մշակութային ժառանգությունը:

Բաց դասի ավարտին մանկավարժները մեկ անգամ ևս հավաստեցին, որ այսօր էլ սուրբ Վարդանանք դարերի խորքից պատգամում են մեզ, որ Քրիստոսով զորացած և մեր հայրենիքի հզորացման ու շենացման սրբազան պատասխանատվությամբ բազմապատկենք մեր ջանքերը՝ հանուն մեր ժողովրդի ապագայի, հանուն մեր իղձերի, հանուն մեր նահատակ զավակների:

Գ. Ավետիսյան

Նկարադարան

Ծրագիր

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ

Ծրագիր
բաց դասի

Մասնագիտություն՝ Խոհարարական գործ՝ խոհարար
Կուրս՝ I
Թեմա՝ «Հայկական ավանդական խոհանոց և նրա կերակրատեսակները»

Նպատակ
- Ներկայացնել ազգային խոհանոցի պատմությունը
- Ներկայացնել ազգային խոհանոցի առանձնահատկությունները
- Ներկայացնել ազգային ավանդական կերակրատեսակները
- Պատրաստել ազգային կերակրատեսակներ

Նախապատրաստական աշխատանքներ
Ուսանողներին հանձնարարել փնտրել և մշակել անհրաժեշտ տեղեկատվություն վերոնշյալ թեմաներով.
✓ Պատմական ակնարկ, ուսուցողա-ճանաչողական ֆիլմեր/տեսանյութ/, տեսանյութեր.

- *ազգային խոհանոցի պատմություն*
- *ազգային ավանդական կերակրատեսակների պատրաստման միջավայրը*
- *հայ խոհարարներ, ովքեր պահպանում են ազգային խոհանոցի առանձնահատկությունները*
- *ազգային ավանդական կերակրատեսակներ*

Դասի ընթացք
Դասն ընթանում է 2 փուլով՝
1-ին փուլ՝ տեղեկատվական-վերլուծական
Մահիկապարի օգնությամբ նշված թեմաների վերաբերյալ հակիրճ տեղեկատվության ներկայացում.
✓ Ազգային խոհանոց
✓ Թեմատիկ տեսանյութի դիտում, մեկնաբանում
✓ Հայ ազգային խոհարարներ և նրանց գործունեությունը
✓ Կարճամետրաժ տեսահոլովակի դիտում
2-րդ փուլ՝ մասնագիտական կարողությունների ցուցադրում
✓ Ազգային որոշ ճաշատեսակների ցուցադրում և մեկնաբանում
- *դոլմա*
- *լավաշ*
- *գալթա*
- *ճմուռ*
- *տոլմա*
- *դոշաբ*
- *թան*
- *թանապուր*
- *հալիսա*
-

Ուսանողների կողմից եզրափակիչ խոսքի ներկայացում. «Խոհարարության դերն ու նշանակությունը»
Ակնկալվող արդյունք
Մասնագիտական լրացուցիչ գիտելիքներով հարստացած, մասնագիտությամբ հետաքրքրված, թիմում աշխատելու կարողությամբ և օժտված ուսանողներ:

Դասավանդող՝ Գ.Մուրադյան

Լուսաբանում

Մ/թ մարտի 3-ին Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանի «Խոհարարական գործ՝ խոհարար» մասնագիտությամբ I կուրսում անցկացվեց «Հայկական խոհանոց և նրա կերա-կրատեսակները» թեմայով բաց դասը: Դասի նպատակն էր ներկայացնել ազգային խոհանոցի պատմությունը, առանձ-նահատկությունները, ինչպես նաև ազգային ավանդական կերակրատեսակները՝ պատ-րաստման եղանակներով և գործընթացի բովանդակալից նկարագրությամբ:

Դասը մեկնարկվեց ազգային ոգով ներշնչված նախաբանով. «Խոհանոցը ազգային մտածողության և մշակույթի մի մաս է, որտեղ խոհարարը խորհում է և ստեղծագործում»:

Առավել հետաքրքիր էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի մարդկության ոչ նյութական մշակութային ժառանգության՝ «Լավաշ» հացի պատրաստման, մշակման և նշանակության մասին տեսանյութը: Անդրադարձ կատարվեց նաև ազգային խոհանոցի զարգացման պատմությանը, որը համեմված ազգային բանահյուսական տարրերով:

Ցուցադրվեց նաև սովորողների կողմից ստեղծված թեմատիկ տեսանյութեր՝ գրագետ և բովանդակալից մեկնաբանություններով: Բաց դասը իրականացվեց տեխնիկապես կահավորված խոհանոցում:

Տպավորիչ էր նաև հայկական ավանդական կոլորիտային խեցեղենով զարդարված սեղանը, որտեղ ներկայացված ազգային խոհանոցի տարատեսակները՝ տոլման, պանրիսաշը, տհալը, ղափաման, հարիսան, կոլոնդրակը, մրգաչրերը, թանը և դոշաբը առավել արտահայտիչ և «անուշահամ» դարձրին թեմատիկ դասը:

Դասախոս՝ Գ. Մուրադյան

Նկարադարան

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում 2021թ. փետրվարի 12-ին տեղի ունեցավ սեղանի թենիսի մրցաշար: Մրցաշարին մասնակցեցին ուսումնարանի տասը ուսանող բոլոր կուրսերից:

Մրցաշարի նպատակն էր խթանել հետաքրքրություն սեղանի թենիսի նկատմամբ, ձևավորել ուսումնարանի հավաքական թիմ:

Լարված և հետաքրքիր պայքարում մրցանակային պատվավոր տեղեր զբաղեցրին հետևյալ ուսանողները.

I տեղ - Ազատ Ասատրյան <Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի> մասնագիտության առաջին կուրսի ուսանող

II տեղ - Մուշեղ Ստեփանյան՝ <Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի> մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող

III տեղ - Միհր Ղանդիլյան՝<Համակարգիչների շահագործում՝ օպերատոր համակարգչի> մասնագիտության երկրորդ կուրսի ուսանող

Մրցանակային տեղեր զբաղեցրած ուսանողները պարգևատրվեցին պատվոգրերով:

Ֆիզդեկ՝ Ն.Սուքիասյան

Լուսաբանում

Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարանում ապրիլի 9-ին մեկնարկվեց Կարիերայի ուղղորդման կենտրոնի կողմից հայտարարված «Բաց դռների ամիս» միջոցառումների շարքը:

Միջոցառմանը ներկա էին «Բիզնես և կրթություն-գործընկերություն» հիմնադրամի խորհրդի նախագահ՝ Մարինե Ժամկոչյանը, գործադիր Անուշ Ռստակյանը, «Ֆերտի» բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ՝ Խաչիկ Սահակյանը և Շիրակի մարզի Սարատակ և Ջրաձոր համայնքների երիտասարդներն ու մանկավարժները:

Միջոցառումը մեկնարկվեց համայնքների երիտասարդներին՝ Կարիերայի ուղղորդման պատասխանատու Լևոն Իգիթյանի և ուսանողական խորհրդի անդամների կողմից իրականացված մասնագիտական կողմնորոշմանը խթանող քայլերով, նրանք շրջայց կատարեցին ուսումնարանի արհեստանոցներով և գործնականում ծանոթացան ուսումնարանում առկա մասնագիտություններին, ուսանողների կատարած աշխատանքներին:

Միջոցառման երկրորդ հատվածում «Վերականգնվող էներգիայի աղբյուրներ ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաներ» թեմայով դասախոսություն կարդաց «Ֆերտի» բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության ղեկավար Խաչիկ Սահակյանը, ով հանգամանորեն ներկայացրեց արևային էներգիայի օգտագործման հնարավորությունները՝ որպես այլընտրանքային աղբյուր, դրա արդյունավետությունը և նպատակահարմարությունը:

Ի դեպ, «Ֆերտի» բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից «Վերականգնվող էներգիայի աղբյուրների ու էներգաարդյունավետ տեխնոլոգիաների ներդրմամբ կենտրոն-լաբորատորիայի ստեղծման» ծրագրի շրջանակներում ուսումնարանի «Արևոտ Շիրակ» Ուսանողական ընկերությունը մասնակցել է հայտարարված ենթադրամաշնորհային ծրագրերի մրցույթին՝ շահել և ֆինանսավորվել է, որի արդյունքում ուսումնարանից զատ Սարատակ, Շիրակավան համայնքներում ընկերության կողմից տեղակայվել են արևային կայաններ, ձեռք բերվել պայմանավորվածություններ նաև Ջրաձոր և Ալվար համայնքներում:

Հարկ է նշել, որ Գերմանական «Բիզնես և կրթություն» հիմնադրամի համագործակցությամբ ուսումնարանում 2019 թվականից ձևավորվել են «Առողջ սերունդ», «Գեղեցիկ վարսեր», «Էկոլոգիապես մաքուր տոպրակներ», «Ազգային հուշանվերներ», «Արևոտ Շիրակ» Ուսանողական ընկերությունները: Ընկերությունների անդամները փետրվար ամսից համագործակցել են Շիրակի մարզի Սարատակ, Ջրաձոր, Շիրակավան համայնքների աշակերտների հետ, ներկայացրել իրենց ընթացիկ աշխատանքները, որի արդյունքում համայնքների երիտասարդների նախաձեռնությամբ ձևավորել են Աշակերտական ընկերություններ:

Ուսումնարանի տնօրեն Քնարիկ Ահարոնյանը մատնանշեց Սարատակ և Ջրաձոր համայնքների երիտասարդների ոգևորությունը, ձևավորված Աշակերտական ընկերությունների տեսլականը և նրանց համագործակցությունը ուսումնարանի Ուսանողական ընկերությունների հետ:

Համայնքների երիտասարդներին իրենց գործունեությունը ներկայացրին ուսումնարանի «Արևոտ Շիրակ», «Առողջ սերունդ» Ուսանողական ընկերությունների անդամներ Արթուր Ջուռնաչյանը և Ջոհրաբ Գևորգյանը: Նրանք կիսվեցին զրանցած հաջողություններով և դժվարություններով:

Ուսումնարանի տնօրենի կազմակերպադաստիարակչական գծով տեղակալ Անուշ Մկրտչյանը կարևոր համարեց անդրադառնալ բիզնես գաղափարի ընտրությանը, բիզնես պլան կազմելու նրբություններին և պատասխանեց երիտասարդներին հետաքրքրող հարցերին:

Միջոցառումն ընդմիջվեց «Առողջ սերունդ» Ուսանողական ընկերության կողմից կազմակերպված համեղ և առողջ սննդի հյուրասիրությամբ:

Նկարադարան